

Համաձայնեցված է
ՀՀ ֆինանսների նախարարության հետ
Վ. Գաբրիելյան

ՀՀ կառավարության առընթեր պետական
եկամուտների կոմիտեի նախագահ
Գ. Խաչատրյան

15 հուլիսի 2011 թ.

1 հուլիսի 2011 թ.

N 33

Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Պ Ա Ր Զ Ա Բ Ա Ն ՈՒ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՐՏԱԴՐՎՈՂ ԵՎ ԻՐԱՑՎՈՂ՝ ՇՐՋԱԿԱ
ՄԻՋԱՎԱՅՐԻՆ ՎՆԱՍ ՊԱՏՃԱՌՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՎՃԱՐԻ
ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության 1998 թվականի դեկտեմբերի 28-ի ՀՕ-270 օրենքի 4-րդ հոդվածի «գ» կետին համապատասխան՝ բնապահպանական վճարի տեսակներից է շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար բնապահպանական վճարը, իսկ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերության համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում արտադրվող և իրացվող՝ շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար վճարը հաշվարկում է արտադրողը՝ իրացման շրջանառության հիման վրա և վճարում է հաշվետու ժամանակաշրջանում իրացված արտադրանքին համամասնորեն:

«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի ապրիլի 3-ի ՀՕ-320 օրենքի 45-րդ հոդվածի 10-րդ մասի 3-րդ պարբերության համաձայն, եթե իրավական ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է «և» կամ «ու» շաղկապով բաժանված պայմաններով, ապա այդ նորմի կիրառման համար թվարկված բոլոր պայմանների առկայությունը պարտադիր է:

Առկա իրավիճակում տարաբնույթ է ընկալվում Հայաստանի Հանրապետությունում արտադրվող և Հայաստանի Հանրապետությունում չիրացվող (արտահանվող)՝ շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար բնապահպանական վճարի հաշվարկման և վճարման հարցը:

«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ իրավական ակտի պաշտոնական պարզաբանումը տրվում է իրավական ակտի պաշտոնական մեկնաբանման համար նախատեսված կանոններով, իսկ 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն իրավական ակտի մեկնաբանությամբ չայտք է փոփոխվի դրա իմաստը:

Հաշվի առնելով վերը նշվածը, **պաշտոնապես պարզաբանում եմ.**

Հայաստանի Հանրապետությունում արտադրված՝ շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար բնապահպանական վճարը արտադրողի կողմից հաշվարկվում և վճարվում է միայն Հայաստանի Հանրապետությունում իրացված ապրանքների մասով: